«ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ պարոն Ա. Գևորգյանին
ՀՀ, ք.Երևան, Մարգարյան նրբանցք 7, տարածք 23
ՀՎՀՀ 01273049

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Գևորգյան,

«ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու), և «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ կնքվել է պահնորդական ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված բացասական եզրակացությունը որում որպես անհապատասխանություն նշվել է հետևյալը՝

Հաշվի առնելով «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի և «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ միջև 30.12.2019 թվականին կնքված 55ԴՊ-ԳՀՇՁԲ-20/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 2.1.3. կետի ա) ենթակետի և հավելված 1-ով հաստատված ծառայությունների տեխնիկական բնութագրի դրույթները, ինչպես նաև 21.10.2020 թվականին «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ում արձանագրված դեպքը՝ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստը, ինչպես նաև այդ մասին «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ա. Գևորգյանի կողմից ՀՀ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու փաստը, գտնում ենք, որ թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում:

«ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերության կողմից չեն պահպանվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված հետևյալ դրույթները՝ Պահնորդական ծառայության ընթացքում պետք է իրականացվի 24 ժամյա ֆիզիկական պահպանություն

առնվազն մեկ պահնորդի միջոցով: Պահպանությունը իրականացնող պահնորդը պետք է ունենա պահնորդի որակավորում, տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ունակ լինի՝ ի թիվս այլնի,

- ✓ պարեկության միջոցով ողջամիտ ժամկետում կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու տարածքում իրավախախտումները,
- ✓ ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր:

Վերոգրյալի լույսի ներքո պետք է փաստել, որ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից մոտ 1200000 ՀՀ դրամ գումարի կորստի փաստը արձանագրվել է «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից, որի մասին «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերությունից բացատրություններ պահանջելուց հետո նույն ընկերության տնօրենը ներկայացրել է հաղորդում ՀՀ իրավապահ մարմիններին: Արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ անվտանգության աշխատակցի ծառայության իրականացման համար նախատեսված սենյակի հարևանությամբ տեղադրված և դրամահավաքի համար նախատեսված արկղից ՀՀ դրամ գումարի կորստի փաստը կամ դուրս է մնացել պարեկություն իրականացնող աշխատակցի տեսադաշտից, որի արդյունքում պատշաճ չի իրականացվել անմիջապես իր հարևանությամբ գտնվող արկղից գումարի կորստի փաստը կամ այդ մասին չի ներկայացվել համապատասխան զեկուցագիր և չի տեղեկացվել նաև «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրենը և/կամ աշխատակազմը:

Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում ենք, որ «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերության կողմից թույլ է տրվել «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի և «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊԸ միջև 30.12.2019 թվականին կնքված 55ԴՊ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրի էական պայմանների խախտում և պայմանավորված նշվածով 2020 թվականի հունիս ամսվա ընթացքում մատուցված ծառայության արդյունքները չեն ընդունվում և նույն Պայմանագրի 2.1.3. կետի ա) ենթակետի 3.2.; 3.3. և 7.11. կետերի դրույթներին համապատասխան Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է 31.10.2020 թվականից: Միևնույն ժամանակ Պայմանագրի 4.1. և 5.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 28800 (քսանութ հազար ութհարյուր) ՀՀ դրամի չափով տուգանք, որը պարտավոր եք վճարել Պայմանագրում նշված պատվիրատուի բանկային հաշվին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը տեղեկացվում է, որ «ԵՐԵՎԱՆԻ Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը՝

1. 04.11.2020թվականից միակողմանի լուծում է Պայմանագիրը,
2. Պայմանագրի 4.1. և 5.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 28800 (քսանութ հազար ութհարյուր) ՀՀ դրամի չափով տուգանք
3. Ձեռնարկում է Պայմանագրից և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Տնօրեն՝ **Գ. Սարուխանյան**